



ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ  
առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք  
դրան անդրադարձնալ ավելի ուշ:

*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության  
համար:*

1) Ի՞նչ երկարությամբ ձող է անհրաժեշտ 18 միլիմետր ներքին տրամագծով մատանի պատրաստելու համար, եթե ձողի հաստությունը 1.5 միլիմետր է:

- 1) 60.23 մմ
- 2) 61.23 մմ
- 3) 62.23 մմ
- 4) 59.23 մմ

2) Նշվածներից ո՞րն է օգտագործվում 958 հարգի ամուսնական մատանու փայլեցման ժամանակ:

- 1) փայլեցման ձողը (մասխալը)
- 2) ինժեկտորը
- 3) մոդելային մոմը
- 4) հարթաշուրթը

3) 150 մմ X 60 մմ X 4 մմ չափսերով 999 հարգի ոսկու ձուլակտորի քաշն է:

- 1) 691.7 գ
- 2) 685.5 գ
- 3) 694.8 գ
- 4) 681.6 գ

4) Որքա՞ն է 110մմ X 80մմ X 5 մմ չափսերով 999 հարգի պլատինի ձուլակտորի քաշը:

- 1) 943.8 գ
- 2) 968.2 գ
- 3) 945.5 գ
- 4) 924.4 գ

5) Որքա՞ն է 150 մմ X 60 մմ X 4 մմ չափսերով 999 հարգի արծաթի ձուլակտորի քաշը:

- 1) 389.4 գ
- 2) 378.0 գ
- 3) 391.8 գ
- 4) 394.0 գ

6

Որքա՞ն է 160 մմ X 90 մմ X 6 մմ չափսերով 999 հարգի ռոդիումի ձուլակտորի քաշը:

- 1) 984.96 գ
- 2) 1088.64 գ
- 3) 1140.48 գ
- 4) 1071.36 գ

7

Նշվածներից ո՞րն է թանկարժեք մետաղ:

- 1) նիկելը
- 2) պղինձը
- 3) սնդիկը
- 4) իրիդիումը

8

Նշված մետաղներից ո՞րն է ամենադյուրահալը (հեշտ հալվողը):

- 1) ռոդիումը
- 2) պղինձը
- 3) ցինկը
- 4) կադմիումը

9

Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 17 գրամ 999 հարգի ոսկուց 375 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

- 1) 28.455 գ
- 2) 28.288 գ
- 3) 28.764 գ
- 4) 28.825 գ

10

Ոսկու հարգի փոփոխման դեպքում՝ 18.6 գրամ 750 հարգի ոսկու համաձուլվածքից 375 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար քանի՞ գրամ խառնուրդ (լիգատուրա, ալոյ) է անհրաժեշտ:

- 1) 18.60 գ
- 2) 18.90 գ
- 3) 18.40 գ
- 4) 18.20 գ

11 Որքան պետք է լինի ոսկու համաձուլվածքի հրափափկեցման (թավվման) ջրմաստիճանը:

- 1) 700 – 750 °C
- 2) 900 – 950 °C
- 3) 800 – 850 °C
- 4) 1000 – 1050 °C

12 Որքան պետք է լինի արծաթի համաձուլվածքի հրափափկեցման (թավվման) ջրմաստիճանը:

- 1) 600 – 650 °C
- 2) 400 – 450 °C
- 3) 500 – 550 °C
- 4) 700 – 750 °C

13 Նշվածերից ո՞րն են թանկարժեք քար:

- 1) ռոդոնիտը
- 2) ամազոնիտը
- 3) զմրուխտը
- 4) Նեֆրիտը

14 Նշվածերից ո՞րն են մտնում կիսաթանկարժեք քարերի խմբի մեջ:

- 1) փիրուզը
- 2) մարգարիտը
- 3) ալմաստը
- 4) սաթը(янтарь)

15 Նշված հարգերից ո՞րը չի համապատասխանում ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

- 1) 900
- 2) 916
- 3) 925
- 4) 999

16

Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված պլատինի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին :

- 1) 950
- 2) 850
- 3) 875
- 4) 920

17

Նշված հարգերից ո՞րը չի համապատասխանում ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին:

- 1) 750
- 2) 585
- 3) 583
- 4) 333

18

Նշված հարգերից ո՞րն է համապատասխանում ՀՀ-ում ընդունված պալադիումի համաձուլվածքի դրոշմակնքման չափանիշին

- 1) 850
- 2) 800
- 3) 890
- 4) 900

19

Ո՞ր ջերմաստիճանում է սկսում հալվել ոսկին:

- 1) 1063 °C
- 2) 980 °C
- 3) 1083 °C
- 4) 875 °C

20

Ո՞ր ջերմաստիճանում է սկսում հալվել արծաթը :

- 1) 960.5 °C
- 2) 940.5 °C
- 3) 930.5 °C
- 4) 925.5 °C

21

Նշված պնդումներից ո՞րը քարերի տեղադրման տեսակ չէ:

- 1) բորներային
- 2) կրապանային
- 3) կորներային
- 4) անշարժ (глыхая)

22

Նշվածներից ո՞րը խորհուրդ չի տրվում կիրառել սառը արծանապակեպատված (էմալապատված) իրերի վերանորոգման ժամանակ:

- 1) երկարատև բարձր ջերմային ազդեցությունը
- 2) հովացնող հեղուկի մեջ երկարատև ընկղմումը
- 3) հղկաթղթումը
- 4) փայլեցումը

23

Հետևյալ գործիքներից որո՞նք չեն օգտագործվում լարաձգման ժամանակ:

- 1) հարթաշուրթը
- 2) գառը
- 3) ֆիլերը
- 4) մետաղական կտրիչը

24

Ո՞ր գործողությամբ է պետք սկսել գարդերի վերանորոգումը:

- 1) լվացմամբ
- 2) կշռմամբ
- 3) գոդումով
- 4) փայլեցմամբ

25

Ո՞ր գործիքը չի օգտագործվում մոդելային մոմի մշակման ժամանակ:

- 1) սղոցը
- 2) խարտոցը
- 3) ֆրեզները
- 4) մուրճը

26

Ո՞րն է ամուսնական մատանու պատրաստման վերջին գործողությունը:

- 1) փոփոխել չափսը
- 2) լվացումը
- 3) չորացումը
- 4) փայլեցումը

27

Ո՞ր գործողությունը չի կատարվում քարերով իրի վերանորոգման ժամանակ՝ գողումից հետո:

- 1) իրը աստիճանաբար հովացնելը
- 2) իրը թափահարել, հովացնելը
- 3) իրը սառը օդային հոսքով հովացնելը
- 4) իրը անմիջապես հոսող ջրի տակ հովացնելը

28

Ո՞ր մետաղն է ունենում խիստ բացասական ազդեցություն ուկու համաձուլվածքին խառնվելու դեպքում:

- 1) արծաթը
- 2) անագը
- 3) պղինձը
- 4) երկաթը

29

Քանի՞ գրամ 999 հարգի ոսկի է անհրաժեշտ՝ 20 գրամ 585 հարգի ոսկու համաձուլվածքից 750 հարգի ոսկու համաձուլվածք ստանալու համար:

- 1) 13.25 գ
- 2) 14.25 գ
- 3) 12.75 գ
- 4) 11.65 գ

30

Քանի՞ գրամ 999 հարգի արծաթ է անհրաժեշտ՝ 12 գրամ 875 հարգի արծաթի համաձուլվածքից 925 հարգի արծաթի համաձուլվածք ստանալու համար:

- 1) 6.1 գ
- 2) 10.1 գ
- 3) 11.2 գ
- 4) 8.1 գ

31

**Տրվածներից 3-ի օգտագործումը պարտադիր չէ շղթաների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. հալումը
2. մոդելային մոմը
3. մատանու չափսը փոխող գործիքը (բուրատին)
4. գոդումը
5. A4 ֆորմատի տպագրական թուղթը
6. գլոցումը (վալցովկա)
7. նրբախարտոցը (նաթֆիլ)

32

**Տրվածներից 3-ը չ/ օգտագործվում մոդելային մոմից մանրակների պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. գծագրական կարկինը
2. ծծմբական թթուն
3. մանրախարտոցը
4. չափիչ գործիքը
5. մեղրամոմը
6. զոդանյութը(припой)
7. լանցետը

33

**Տրվածներից 3-ը չ/ օգտագործվում ձուլման եղանակով մանրակներ պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կարկինը
2. ունեյակը (պինցետ)
3. ապակյա խառնիչ ձողը
4. հալամանի բռնիչը
5. մատնոցը
6. յուղային հովացման տարան
7. խառնիչը (միքսեր)



34

**Տրվածներից 3-ը օգտագործվում են հյուսվածքային տեխնիկայի (Ֆիլիգրան) կիրարման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. մոդելային մոմը
2. մոմի զոդիչը
3. սևացնող հեղուկը (ծծմբային պոտած)
4. ինժեկտորը
5. արքայաջուրը
6. թիրեղային զոդանյութը
7. լարաձգման տախտակը

35

**Տրված պնդումներից 3-ը համապատասխանում են մասնագիտական ներածության և նյութագիտության դրույթներին: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Հայաստանում հայտնաբերված հնագիտական պեղումների գտածոները վերաբերում են նյութական մշակույթի նմուշներին՝ ստեղծված Մ.թ.Ա. IV, III և II հազարամյակներում:
2. Ռոդիումի քիմիական նշանն է՝ Ro:
3. Պողպատը երկաթի և ֆոսֆոր (p) համաձուլվածք է:
4. Թուջը (չուգունը) երկաթի և ծծումբի (S) համաձուլվածք է:
5. ՀՀ-ում ընդունված ոսկու համաձուլվածքն է՝ 916-ը:
6. ՀՀ-ում ընդունված արծաթի համաձուլվածքն է՝ 800-ը:
7. ՀՀ-ում ընդունված Պլատինի համաձուլվածքն է՝ 900-ը:

36

**Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. լարաձգման տախտակը (ֆիլեր)
2. պալադիումը (Pd)
3. նիկելը (Ni)
4. անագը (Sn)
5. բոռ-մեքենան
6. փայլեցման սարքը
7. պղինձը (Cu)

37

Տրվածներից 3-ը չ/ի օգտագործվում ոսկյա իրերի նորոգման աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. անագի գողիչը
2. շտանգեն-ցիրկուլը
3. հիդրազինը
4. չափիչ ռիգելը (մալավ)
5. խոշորացույցը
6. միկրոմետրը
7. անագե գողանյութը

38

Տրվածներից 3-ը օգտագործվում են գլոցման և լարաձգման եղանակով մշակման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. լարաձգման տախտակը(ֆիլեր)
2. ստվարաթուղթը
3. ֆտորաջրածնային թթուն (պլավիկյանը)
4. մոդելային մոմը
5. ձուլումը
6. հարթաշուրթը
7. միկրոմետրը

39

Տրվածներից 3-ը չ/ի օգտագործվում փականագործական աշխատանքների կատարման ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. քանոնը (մետաղյա)
2. մկրատը
3. գայլիկը
4. ինժեկտորը
5. լակմուսի թուղթը
6. մանգաղը
7. շտանգեն-ցիրկուլը

Տրվածներից 3-ը օգտագործվում են ոսկերչական զարդերի հավաքման և մշակման պրոցեսի ժամանակ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. մոդելային մոմը
2. վուլկանիզատրը
3. ինժեկտորը
4. ոսկերչական դազգահը
5. ֆոնդները
6. գոդումը
7. մոմի գոդիչը